

ԿԱՐԾԻՔ

Աննա Արթուրի Շահբազյանի

Անգլերեն հեղինակային նորակազմությունների համարժեքության պահպանման խնդիրը հայերեն թարգմանվածքում (Ջ. Ռուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հիման վրա») թեմայով

Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ֆենթըզի ժանրը առանձնանում է իր երևակայական աշխարհով, առասպելական արարածներով և բարդ սյուժեով, որը հաճախ դուրս է գալիս իրականության սահմաններից: Ժանրի ամենաուշագրավ առանձնահատկություններից մեկը լեզվի օգտագործումն է, որն առանցքային դեր է խաղում այն հետաքրքիր և այլաշխարհիկ փորձառությունների ձևավորման գործում, որոնք ֆենթըզի ժանրի ստեղծագործությունը առաջարկում է ընթերցողներին: Ամբողջովին նոր՝ երևակայական աշխարհներ ստեղծելու համար հեղինակները հաճախ օգտագործում են եզակի լեզվական գործիքներ, որոնք ներառում են նորակազմությունների կամ անգամ ամբողջովին նոր լեզուների կամ բարբառների ստեղծում: Այս լեզվական առանձնահատկությունները կատարում են որոշակի գործառույթներ, օրինակ՝ երևակայական աշխարհում կախարդական կամ մշակութային իրերի և երևույթների արտացոլումը: Այսպիսով, նորակազմությունները հեղինակի կողմից հաճախ հորինվում են՝ նկարագրելու իրականության մեջ գոյություն չունեցող արարածներ, կախարդական համակարգերը կամ անձանոթ տեղանքներ: Այս բառերը կարող են ունենալ և իմաստային կշիռ՝ տալով ճշգրիտ անվանումներ նոր հասկացություններին, և գործաբանական արժեք, քանի որ դրանք մեծապես նպաստում են ֆենթըզի ստեղծագործության մթնոլորտի կերտմանը:

Լեզվական առանձնահատկությունները, զուգորդված ստեղծագործական աշխարհաշինության հետ, ֆենթըզի գրողներին թույլ են տալիս ոչ միայն պատմություններ պատմել, այլև լեզվի միջոցով ձևավորել ընթերցողի կողմից երևակայական աշխարհների ընկալումը՝ դարձնելով այս ժանրը լեզվաբանորեն հարուստ և բարդ ինչպես ընթերցանության, այնպես էլ թարգմանության առումով:

Ա. Շահբազյանի «Անգլերեն հեղինակային նորակազմությունների համարժեքության պահպանման խնդիրը հայերեն թարգմանվածքում (Ջ. Ռուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հիման վրա)» թեմայով ատենախոսությունը ուսումնասիրում է հեղինակային նորակազմությունների իմաստային և գործաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև այն խնդիրները, որոնց կարող են բխվել թարգմանիչները դրանք այլ լեզուներով թարգմանելիս՝ պահպանելով հեղինակի մտադրությունը և ընթերցողի վրա թարգմանվածքի նույն գործաբանական ազդեցությունը, ինչն ունի աղբյուր տեքստում: Կենտրոնանալով հեղինակային նորակազմությունների վրա՝ այս ուսումնասիրությունը լույս է սփռում գեղարվեստական

գրողների կողմից օգտագործվող ստեղծագործական բառապաշարային ռազմավարությունների վրա և արժեքավոր պատկերացում է տալիս թարգմանական հնարների վերաբերյալ, ինչը պայմանավորում է տվյալ հետազոտության ներդրումը թարգմանաբանական ուսումնասիրությունների մեջ: Նորաբանությունների և նորակազմությունների, մասնավորապես հեղինակային նորակազմությունների թարգմանության խնդիրների ուսումնասիրությունը մշտապես գտնվում է լեզվաբանների և թարգմանաբանների ուշադրության կենտրոնում, ինչը և ապահովում է տվյալ հետազոտության արդիականությունը:

Ներկայացված ատենախոսության շրջանակում առաջին անգամ փորձ է արվել համակարգված վերլուծել տվյալ վեպի բոլոր հեղինակային նորակազմությունները՝ ըստ կազմության և իմաստագործաբանական նշանակության, ինչպես նաև դրանց թարգմանությունները երկու տարբեր թարգմանվածքներում՝ դրանց իմաստային և լեզվագործաբանական առանձնահատկությունների համարժեք փոխադրման և հեղինակի մտադրության ու ստեղծած ազդեցության պահպանման լույսի ներքո:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ՝ սահմանել (հեղինակային) նորակազմությունների թարգմանական համարժեքության քննության մեթոդաբանական շրջանակ, վերհանել ուսումնասիրվող ստեղծագործության մեջ հեղինակային նորակազմությունները և դասակարգել դրանք ըստ իմաստային խմբերի, վերլուծել դրանց ստեղծման ու կազմության կաղապարները, նորակազմությունների արտահայտած գործաբանական իմաստները, այնուհետև ուսումնասիրել դրանց հայերեն թարգմանությունների հիմքում ընկած թարգմանական հնարները և, ըստ անհրաժեշտության, առաջարկել նորակազմությունների թարգմանության այլ իմաստագործաբանական համարժեքության ապահովման տեսանկյունից առավել նախընտրելի տարբերակներ: Ատենախոսը հետևողականորեն անդրադարձել է սահմանված խնդիրների լիարժեք հետազոտությանը ատենախոսության երեք գլուխներում նկարագրական և զուգադրական, բառակազմական, իմաստագործաբանական, ինչպես նաև որակական և քանակական վերլուծության մեթոդների արդյունավետ համակցմամբ:

Ատենախոսության **առաջին գլխում**, որը վերնագրված է *«Արդի անգլերենի նորաբանությունների լեզվագործաբանական առանձնահատկությունները»*, ներկայացված են նորաբանություն հասկացության, տեսակների, կազմության, իմաստագործաբանական առանձնահատկություններին վերաբերող առկա տեսական դրույթները: Հատուկ ուշադրության են արժանացել հեղինակային նորակազմությունների առանձնահատկությունները: Գովելի է, որ ատենախոսը ուսումնասիրել է հայերեն, ռուսալեզու և անգլիալեզու գիտական աղբյուրները, ինչը հնարավորություն է տվել բազմակողմանի ներկայացնելու տարբեր տեսաբանների մոտեցումները և լիարժեք պատկերացում կազմելու նորաբանությունների մասին:

Երկրորդ գլխում ներկայացվում են տարբեր տեսաբանների կողմից առաջադրված թարգմանության մեթոդները ու հնարները, ինչպես նաև ուշադրության և քննության են

առնվում նորաբանությունների և մասնավորապես հեղինակային նորակազմությունների թարգմանության համար գործածվող հնարները: Ինչպես և առաջին գլխում, ատենախոսը ներկայացրել է առկա բոլոր մոտեցումները՝ շեշտադրելով, թե ում տեսություններն են դրվել ուսումնասիրության հիմքում և ինչու:

Երրորդ գլուխը նվիրված է վեպից դուրս գրված նորակազմությունների իմաստագործաբանական առանձնահատկությունների քննությանն ու թարգմանական համարժեքության խնդրի ուսումնասիրությանը: Ա.Շահբազյանը մանրամասն քննարկել է վեպի 1-ին հատորից ընտրված 66 հեղինակային նորակազմությունները՝ անդրադառնալով դրանց ծագումնաբանությանը, հեղինակի մտադրությունն արտահայտելու դրանց իմաստագործաբանական արժեքին, ինչպես նաև հայերեն երկու թարգմանվածքներում կիրառված թարգմանական հնարներին: Հարկ է նշել, որ ատենախոսը ներկայացրել է մանրակրկիտ ծագումնաբանական վերլուծություն՝ հաջողությամբ կիրառելով բառակազմական վերլուծություն, ինչպես նաև օգտվելով բազմաթիվ աղբյուրներից՝ հեղինակի հարցազրույցներ, բառարաններ և այլ գիտական աղբյուրներ, ինչը նրան հնարավորություն է տվել լիարժեք բացահայտելու ուսումնասիրվող միավորների մեծամասնության իմաստագործաբանական արժեքը: Գովելի է, որ որոշ միավորների վերլուծության ժամանակ Ա.Շահբազյանը առաջ է քաշել նաև իր սեփական տեսակետը դրանց հնարավոր կազմության վերաբերյալ: Յուրաքանչյուր նորակազմության վերլուծության շրջանակում ատենախոսը մանրամասն անդրադարձ է կատարել նաև երկու թարգմանիչների կողմից ընտրված թարգմանական ռազմավարություններին և հնարներին՝ մենաբանելով դրանց նպատակահարմարությունը ուսումնասիրվող միավորների իմաստագործաբանական արժեք պահմանելու և հայ ընթերցողին փոխանցելու տեսակյունից: Որոշ դեպքերում ատենախոսը առաջարկել է նաև թարգմանության իր տարբերակները, որոնք միտված են պահպանելու նորակազմությունների իմաստագործաբանական արժեքը: Առաջարկված տարբերակների մի մասը կարելի է համարել ընդունելի և իսկապես հաջողված, ինչպես օրինակ՝ որոշակի հնչյունական փոփոխություններով տարբերակները՝ Դամբլբոռ Դամբլդորի փոխարեն/էջ 67/, Փիվզ փոլթերգայսթի անվան թարգմանությունը որպես Գարշ /էջ 83/, մադամ Պենսնե՝ մադամ Փինսի փոխարեն /էջ 87/, մադամ Փոփի Փոմֆրիի ազգանվան թարգմանությունը որպես Փոփի Փարխոտ՝ բաղաձայնույթի պահմանմամբ /էջ 90/ կամ Սքեբերս առնետի անվանման թարգմանությունը որպես Քոսոտիկ /էջ 117/ և այլն:

Եզրակացության մեջ, ինչպես հարկն է, ամփոփվում են ատենախոսության սահմանված խնդիրներից բխող վերլուծության ընդհանուր և մասնավոր արդյունքները: Տրված են նաև վիճակագրական տվյալներ՝ ըստ նորակազմության կազմության ձևերի և կիրառված թարգմանական հնարների:

Ուսումնասիրվող վեպի հեղինակային նորակազմությունների իմաստագործաբանական բեռնվածության, կիրառված բազակազմական ուղիների, երկու թարգմանչուհիների կիրառած թարգմանական հնարների քանակական և որակական

զուգադրության վիճակագրական գծապատկերները ներկայացված են ատենախոսության հավելվածում:

Հարկ է նշել, որ ատենախոսությունը գրված է գրագետ և համապատասխան գիտական ոճով և, հիմնականում նկատելի չեն ոճական անհարթություններ կամ ուսաբանություններ:

Այդուհանդերձ, նշենք, որ աշխատանքը կշահեր, եթե կատարվեին մի շարք փոփոխություններ: Դիտարկումները հիմնականում առնչվում են ատենախոսի առաջարկած թարգմանության տարբերակներին: Այսպես՝

1. Ինչպես վերը նշվել է, որոշ նորակազմությունների դեպքում Ա.Շահբազյանը տվել է թարգմանության հաջողված տարբերակ, որտեղ շեշտադրված է իմաստային պատճառաբանվածության և գործաբանական ազդեցության պահպանումը: Այդուհանդերձ, կան տարբերակներ, որոնք վիճարկելի են: Դրանք մասնավորապես վերաբերում են անունների և ազգանունների թարգմանությանը, որոնց դեպքում ատենախոսը առաջարկել է տարբերակներ, որոնք պատճենման արդյունք են, կամ անգլերեն նորակազմության բաղադրիչների ծագումնաբանության վերլուծության արդյունքում կազմված բառ: Արդյունքում սակայն ստեղծվում է մի իրավիճակ, երբ կերպարի անունը պահպանվում է, իսկ ազգանունը ենթարկվում մշակութային հարմարեցման, օրինակ՝ Ռուբենուս Քնատ Հագրիդի փոխարեն/էջ 68/, Վինդիկուս Դալարացի Վիրիդիանի փոխարեն /էջ 74/, որտեղ չի պահմանվում նաև բաղաձայնույթը, Արգուս Ճողոպրիչ՝ Արգուս Ֆիլչի փոխարեն /էջ 80/, որը մեր կարծիքով ստեղծում է ճանաչողական աններդաշնակություն: Երբեմն հայերեն տարբերակն էլ կարող է հայ ընթերցողի համար ընկալելի չլինել, օրինակ՝ առաջարկվում է Gringotts անունը կրող բանկը թարգմանել Գուղձանոց, որտեղ գուղձ նշանակում է ոսկու, արծաթի ձուլակտոր, ինչը կարող է ծանոթ չլինել հայ ընթերցողների մեծ մասին: Ատենախոսության երրորդ գլխի սկզբում /էջ 59/ Ա.Շահբազյանը մեջբերում է թարգմանչուհի Ա.Ջիվանյանին, որն անդրադարձել է այն փաստին, որ թարգմանվածքում փորձ չի արվել Ռուդինգի ստեղծած աշխարհը հարմարեցնել հայ մշակույթին, այլ պահպանվել է անգլիականը, ինչով էլ պայմանավորված է անունների հնչյունադարձումը կամ տառադարձումը, որը, մեր կարծիքով, ճիշտ որոշում է, քանի որ թարգմանչուհին որդեգրել է թարգմանության կոնկրետ մեկ ռազմավարություն՝ ձևային /Յու. Նայդա/ կամ իմաստային /Փ.Նյումարկ/: Ատենախոսն ինքը 136-րդ էջում, քննարկելով Մոգերի դպրոցի հոսքերի անվանումները, պնդում է, որ թեև հնարավոր է դրանց մի մասի թարգմանությունը պատճենմամբ, նախընտրելի է հնչյունադարձումը՝ հետևողականության ապահովման տեսակյունից /էջ 137/:

2. Խոսելով լատինական, հունական կամ ֆրանսիական արմատներից կազմված նորակազմությունների մասին Ա.Շահբազյանը պնդում է, որ դրանց իմաստային պատճառաբանվածությունը փոխանցելը պարտադիր չէ, քանի որ դրանք

անհասկանալի են նաև անգլիացի ընթերցողի համար: Այսինքն, ատենախոսը կարևորում է անգլիական հիմքերով նորակազմությունների իմաստի ճշգրիտ փոխանցումը: Այնուամենայնիվ նշենք, որ հաճախ հին անգլերենից վերցված /օրինակ՝ հին անգլերեն բարբառային բառը՝ Hagrid – *վաղ անհանգիստ գիշեր անցկացրած*, ատենախոսը առաջարկել է թարգմանել *քնալ*/ կամ հնչյունական փոփոխությունների ենթարկված հիմքերով ստեղծված նորակազմությունները կարող են անհասկանալի լինել անգամ աղբյուր տեքստի ընթերցողների համար /professor Flitwick՝ պրոֆեսոր Ֆլիթվիք, որի համար ատենախոսը առաջարկել է Շարժակայծ տարբերակը, կամ Mr.Ollivander՝ պարոն Օլիվանդերի համար՝ Ձիթածողարար տարբերակը/, որոնք մեր կարծիքով արհեստականորեն պատճենված են: Եթե հետևենք նման տրամաբանությանը, ապա պետք է փոխանցվեն նաև թվացյալ նորաբանությունների իմաստը /էջեր 138-145/, որոնք ևս ունեն իմաստագործաբանական բեռնվածություն և, հետևաբար, դրանց ընտրությունը ևս պատահական չէ: Սակայն դրանց համար ատենախոսը տարբերակներ չի առաջարկում: Կարծում ենք ուսումնասիրվող միավորների իմաստը փոխանցելու և գործաբանական ազդեցությունը պահպանելու այլ հնարներ կարելի է կիրառել, օրինակ՝ բացի ծանոթագրություններից, կիրառել փոխհատուցման, բացատրության կամ հավելման հնարները՝ կերպարների նկարագրության մեջ ցույց տալով անվան իմաստային ծավալը: Ատենախոսը ինքը մեկ դեպքում առաջարկում է հաջողված տարբերակ՝ արհեստագործական բառի հավելումը «Սմելթինգզ» վարժարանի անվան մեջ /էջ 94/:

3. Կարծում ենք, որ միևնույն ռազմավարության պահպանումը թարգմանիչների կողմից կախարդանքների անվանումների թարգմանության համար ևս արդարացված է, և ատենախոսի առաջարկած պատճենված տարբերակները ընդունելի չեն, քանի որ դարձյալ կարող են հանգեցնել ճանաչողական աններդաշնակության, եթե դրանց մի մասը, օրինակ, հնչյունադարձված լինի, մի մասը՝ պատճենված:
4. Հետազոտության մեջ կիրառված մեթոդների շարքում նաև նշված է լեզվաոճական մեթոդը: Ատենախոսության վերլուծական հատվածում հիշատակվում են միայն բաղաձայնայնության դեպքերը, այնինչ անունների և ազգանունների դեպքում ատենախոսի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք ստեղծվել են հասարակ գոյականներից, այսինքն գործ ունենք antonomasia /անթոնոմասիա, անունափոխություն/ ոճական հնարի կիրառման հետ, օրինակ՝ Dumbledore, Hagrid, առկա է նաև periphrasis /շրջասույթի/ օրինակ՝ *He -Who-Must-Not-Be-Named*: Ցանկալի կլիներ, եթե ատենախոսը մատնանշեր նման դեպքերը:

Կատարված դիտարկումները չեն նսեմացնում հետազոտության տեսական և գործնական արժեքը, նորույթը և գիտականությունը: Հետազոտությունը միավորում է հեղինակի մտադրության, հեղինակային նորակազմության և իմաստագործաբանական բեռնվածության հասկացությունները թարգմաբանական տեսությունների հետ և

մեկնաբանում դրանք կոնկրետ օրինակների վերլուծությամբ: Հեղինակային նորակազմությունների թարգմանությունների վերլուծության արդյունքները ու թարգմանական ռազմավարությունների արդյունավետության գնահատականները կարող են հետազայում հիմք դառնալ նորաբանությունների, այդ թվում նաև հեղինակային նորակազմությունների համարժեք թարգմանության ապահովման համար:

Ատենախոսության սեղմագրում արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության արդյունքները և եզրակացությունները, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Աննա Արթուրի Շահբազյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող Օտար լեզուների 009 մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
Անգլերենի հաղորդակցության ամբիոնի վարիչ,
բ.գ.թ., դոցենտ



Լիլիթ Բադալյան

Հաստատում եմ Լ. Բադալյանի ստորագրությունը
ԲՊՀ-ի գիտքարտուղար՝



Փիլավջյան

14.11.2025